Կասեցնել քայքայման պրոցէսը, հանել երկիրը անիշխանութեան վիճակից ու ստեղծել պետական շինարարութեան համար պայմաններ — ահա թէ ինչպէս է ըմբռնում իր կոչումը ներկայ կառավարութիւնը:

Համաձայն սրան, կառավարութիւնը դնելու է լուծման հետևեալ խնդիրները.

Ա. Ներքին գործերի սահմաններում.

1. Հաստատել երկրում տարրական իրաւակարգ, կեանքի ու գոյքի ապահովութիւն:

2. Բանալ հաղորդակցութեան ճանապարհները անարգել երթևեկութեան համար:

3. Վերականգնել պոստ-հեռագրական նորմալ հաղորդակցութիւն թէ երկրի մէջ և թէ հարևան պետութիւնների հետ:

4. Եռանդուն միջոցների դիմել կարելոյն չափ մեղմացնելու պարենաւորման տագնապը:

5. Տնօրինել գաղթականների և փախստականների վիճակը, մասամբ վերադարձնել իրենց տեղերը, մասամբ տեղաւորել նոր վայրերում:

6. Նախապատրաստել Հայաստանի Սահմանադիր Ժողովի հաւաքումը կարելոյն չափ շուտ:

Բ. Ֆինանսների սահմաններում.

Հող պատրաստել սեփական դրամական սիստեմի հիմքը դնելու համար: Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպէսզի երկիրը ապահովի դրամական նշաններով, վերականգնի արդիւնաբերական կեանքը և ապրանքների փոխանակութիւնը, ինչպէս նաև մշակի հարկերի առողջ սիստեմ:

Գ. Արդարադատութեան սահմաններում.

Ցարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրաւահասկացման և իրաւական սովորոյթների պայմաններին՝ միաժամանակ մասնակից անելով քրէական դատավարութեանը ժողովրդի ներկայացուցիչներին:

Դ. Զինուորական գործերի սահմաններում.

Վերակազմել երկրի զինուորական ուժերը՝ նպատակ ունենալով ստեղծել թւով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահութեամբ ուժեղ բանակ:

Ե. Արտաքին գործերի սահմաններում.

1. Ամրացնել օսմանեան կառավարութեան հետ հաշտութիւնը և բարի դրացիական յարաբերութիւններ հաստատել նրա հետ: Խստիւ կատարել այն բոլոր պարտականութիւնները, որ մենք յանձն ենք առել օսմանեան կայսրութեան հանդէպ ու հետևել, որ օսմանեան կառավարութիւնը իր կողմից անի նոյնը մեր վերաբերմամբ: Մասնաւորապէս լուծել օսմանեան գօրքերի մեր երկրից դուրս բերելու հարցը և գաղթականների վերադարձը:

2. Ադրբէջանի և Վրաստանի հետ փոխադարձ համաձայնութեան գալով՝ լուծել Հայաստանի և այլ պետութիւնների սահմանների հարցը՝ հիմք ունենալով ազգագրական սկզբունքը, իբրև միակը, որ համապատասխանում է ռամկավար պետութիւնների ոգուն ու նպատակներին: